


03.05.2013

00 AUG 2010



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԱՊԵՏ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Զ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

1938

ՆՈՅԵՄԲԵՐ - ՅՈՒՆԻԱՐ

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ՓԵՏՐԻԱՐ 18-ԻՑ ՅԵՏՈՅ

(ՄԵՐ ՀԵՏԱԳԱՅ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ)

1921 թ. փետրարեան համաժողովրդական ապստամբութիւնը Հայաստանում տեւեց հինգ ամիս — փետրար 18-ին Երեւանը ազատագրեց բոլշեւիկներից, ապրիլ 2-ին վերագրաւեց ռուս բանակի ուժով, յուլիս ամսի կէսերին հակաբոլշեւիկ ուժերը Լեռնահայաստանից անցան Արաբքը եւ ապաստան գտան Թարսի գում:

Տարագրութեան հէնց առաջին օրերից սկսած Հայաստանից հեռացած մտաւորականութեան եւ գործիչների շրջանում սկսեց կատարւած գործի քննադատութիւնն ու վերագնահատութիւնը: Եւ առաջին հերքին, բնականաբար, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր որ ձեռնարկեց այդ աշխատանքին, քննութեան առարկայ դարձրեց փետրարեան շարժման հետ կապւած խնդիրները: Տեղի ունեցան բազմամարդ ժողովներ, որոնց մէջ մշակեց կուսակցութեան հետեւելիք քաղաքականութիւնը: Այդ աշխատանքներին մեկնակէտ ծառայեց, ընկերների յանձնարարութեամբ, իմ արած մի գեկուցումը, որի ամփոփումը հրատարակեց Թարսիցի «Այգ» երկօրեայ բերքի 1921 թ. Օգոստ. 13 եւ 18 համարներում:

Այս գեկուցումը արտայայտում է մեր ունեցած մտայնութիւնը 1921-ի փոքրիկայոյց օրերին եւ քաղաքական այն ուղին, որին հետեւում էինք այն ժամանակ: Հետագային, Հ. Յ. Դաշնակցութեան պատասխանատու ժողովներն էլ հաստատեցին այդ ուղին, որին մինչեւ այսօր էլ հաւատարիմ մնացել է մեր կուսակցութիւնը: 17 տարւայ դէպքերը, բայց, մանաւանդ, Հայաստանի ներսն ու շուրջը վեր-

402



520-2001

չերս զարգացող իրադարձութիւնները անգամ կոյրերի աչքին տեսանելի փաստերով հաստատեցին Հ. Յ. Դաշնակցութեան այն ժամանակայն նախատեսութիւնների ու որդեգրած ուղեգծի նիշտ լինելը: Որով, ուրեմն, վերոյիշեալ գեկուցումը այսօր պատմական վաւերագիր հանդիսանալուց բացի ունի նաեւ գործնական ուղեցոյցի նշանակութիւն:

Մատնանշւած երկու հանգամանքով էլ մենք աւելորդ չենք համարում վերարտադրել այդ գեկուցումը «ՎԷՄ»-ի էջերում, քանի որ «Այգ»-ի յիշւած համարները մատչելի չեն որ եւ է մէկին: Այս գեկուցումից ընթերցողը յստակ կերպով կը տեսնէ, թէ ի՛նչ գաղափարներ ու մտահոգութիւններ զբաղեցնում էին մեզ Հայաստանում եւ տարագրութեան առաջին օրերին. կը տեսնէ նաեւ, թէ մեզ վերագրուող շատ տեսակէտներ ու մեր հասցէին նետուող շատ մեղադրանքներ անհիմն են եւ անտեղի: Գաղափարական այն նախապարհը, որին հետեւել է Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայաստանում, կարմիր գծի պէս, անշեղ զարգացել է մինչեւ մեր օրերը: Հ. Յ. Դաշնակցութիւնը ե՛ւ այն ժամանակ, ե՛ւ այսօր պետական ու ժողովրդական շահը գերադաս է համարել իր կուսակցութեան շահից:

Զեկուցումը վերարտադրում է գրեթէ անփոփոխ, սնական մի քանի թեթեւ սրբագրութիւններով եւ աննշան յայտաւումով: Ս. Վ.Ր.

Հայաստանում եւ ամբողջ առաջաւոր Ասիայում այսօր տեղի ունեցող դէպքերը միայն մի զբաղում են կազմում այն վիթխարի պայքարի, որ մղում են իրար դէմ Անտանտն ու Խորհրդային Ռուսաստանը: Ըստ էութեան դա չին վէճի շարունակութիւնն է: Համաշխարհային պատերազմում տնտեսապէս ու քաղաքականապէս պարտւած Ռուսաստանը ձգտում է նոր ձեւերով վերազրաւել իր կորցրած միջազգային դիրքերը: Այն, ինչ որ չյաջողեց իրականացնել Միլիտարիզմներին ու Գուհիզմներին՝ ուսու ազգայնական դրօշակի տակ՝ չիմա իրականացնում են Լենիններն ու Չիչերինները՝ կոմունիզմի եւ միջազգայնութեան անունով: Էութիւնը նոյնն է — ուսուական իմպերիալիզմ. փոխւած է ձեւը — կոմունիզմ: Եւ Անտանտի ղեկավարները շատ լաւ են հասկանում այս հանգամանքը եւ դէպքերը Մերձաւոր Արեւելքում գնահատում են որպէս ուսու — անգլիական չին հակամարտութեան շարունակութիւնը: Ռուսը մղում է դէպի տաք ծով, դէպի միջազգային շահաստանները. անգլիացին նրա թիւն է տալիս, յետ է մղում: Ռուս մութիկը, որ Տրոցկիներին հրամանով դէնք առած գնում է նոր երկիրներ զբաւելլու եւ մանր ազգեր ճնշե-

լու, հետեւում է նոյն տարերւոյին բնազդին, որով շարժւում էր ցարերի հրամանը կատարելիս :

Իրենք՝ բուլչեւիկները համաձայն չեն այսպիսի բացատրութեան : Նրանք պնդում են, որ իրենք պրոչետարական յեղափոխութեան խարոյկներ են վառում դանազան երկրներում : Եւ ուզում են մեզ էլ համոզել, որ սողէտ ու սոյթած ուսն մութիկը համաշխարհային յեղափոխութեան համար է աշխատում եւ ժողովրդներին երկաթով ու կրակով ճնշելով, երկրներ աւերի ու թալանի մատնելով՝ ազատութիւն ու հաւատարութիւն է տարածում : Թո՛ղ, սակայն, նրանք այդպէս համոզւած լինեն. դրանից խնդիրը չի փոխւի : Փաստը մնում է փաստ. Մեր հողի վրա տեղի են ունենում խոշոր ընկերային վերիվայրումներ, որոնք անմիջապէս անդրադառնում են մեր ճակատագրի վրա, եւ մենք պարտաւոր ենք զխտակցել մեր դերն ու զիրքը այդ երեւոյթներին հանդէպ :

Այս խնդրի մասին մենք նոր չէ, որ մտածում ենք : Դեռ անցեալ տարի, հայ քաղաքական ղեկավարները լրջօրէն կշռելով բոլոր հանդամանքները՝ տւին միջազգային ղեկըրից բխող արամարանական պատասխանը — միակը, որ այն ժամանակեայ պայմաններում հնարաւոր էր : Նրանք կամովին հրաժարեցին իշխանութիւնից՝ յօգուտ բուլչեւիկների, որոնք, թւում էր, թէ ստեղծւած կացութեան հետեւանքով աւելի էին ի վիճակի հայ աշխատաւորութեանը խաղաղութիւն եւ զարգացման հնարաւորութիւններ ապահովելու : Դեկտ. 2-ի ախտը մտածւած, չափւած ու ձեւած քաղաքական քայլ էր : Դա մի զիւանադիտական խաղ չէր մեր կողմից, ոչ էլ արդիւնք ներքին թուրութեան, այլ հետեւանք անկեղծ համոզման, որ ա՛յն պայմաններում միայն Խորհրդային Ռուսաստանին յարելով, հնարաւոր էր հաւասարակշռութիւն պահպանել իրար խաչաձեւող դանազան ուժերի հանդէպ : Այդ ուղղութեամբ էր մղում մեզ նաեւ քեմալական անհաշտ եւ արկածախնդիր քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ : Մենք առանց վերապահութեան կամենում էինք դործակցել փոքրութիւ եւ մեր երկրում հող չունեցող, բայց սուսական զօրութեան ընդհանր միջազգային կշիռ ունենալու ընդունակ բուլչեւիկների հետ՝ առանց, ի հարկէ, հրաժարելու միացեալ եւ անկախ Հայաստանի հիմնական գաղափարից : Գործակցութեան ցանկութիւնը ոչ թէ մեր սնտափառութիւնից կամ իշխանամուրթիւնից էր բխում, այլ միանդամայն այն ճիշտ համոզումից, որ հայ ժողովրդի եւ մտաւորակաւորութեան մեծ մասը կարւած է մեզ հետ եւ առանց մեր դործոն աջակցութեան Հայաստանում ո՛չ մի իշխանութիւն չէր կարող յաջողութիւն ունենալ :

Գեկտ. 2-ի ակտին, որին բուլղեւիկները տխմարօրէն, կամ դիտաւորեալ կերպով, յեղափոխութիւն անունն են տալիս, յաջորդեցին յունւարեանն եւ փետրւարեան մղձաւանջային օերերը: Ռուսաստանի զանազան ծայրերից Հայաստան քչւած հայ բուլղեւիկները, որոնց մեծագոյն մասը կամ քրէական տիպեր էին, կամ նախապատրաստական դասարանի աշակերտներ, կամ թողից փախած սրիկաներ եւ կամ, լաւագոյն դէպքում, կրէտիններ ու մտքի ներքինիներ, արեցցած հեշտ ձեռք բերւած էշխանութեամբ, հաստատեցին Հայաստանում մի սէժիմ, որ անուն չունի: Մակիւայիւլիդմի, բոնակալութեան, շանտաժի, պրովոկացիայի, թալանի եւ անամօթութեան սէժիմ էր այդ, երբ ամբողջ հայ ժողովուրդն ու հայ մտաւորականութիւնը խաղալիք դարձան մի քանի խելագարների կամայականութեան, երբ բանաւ դարձաւ հաղարաւոր մարդկանց արեւելայր եւ կացինը՝ էշխանութեան հեղինակութիւնը պահպանելու միջոց: Այս սճրագործ քաղաքականութեան հետեւանքով շուտով ժողովրդի բոլոր խաւերը զրկւանքով երես դարձրին բուլղեւիկներից, եւ երկիրն անպանելի ուժով մղեց դէպի փետրւարեան շարժումները: Գեղեցիկ խօսքի համար չէ, որ ասուում է, թէ փետրւարեան յեղաշրջումն առաջ է կելլ անկազմակերպ, տարերային կերպով եւ առանց լայն ղեկավարութեան: Եթէ երբ եւ իցէ եղել են բռնապետութեան դէմ ուղղւած անխառն ժողովրդական շարժումներ, դրանից ամենաժողովրդականն, անկասկած, փետր. 18-ի յեղաշրջումն էր Հայաստանում:

Այսպիսով, սերմն, փետրւարեան յեղաշրջումը արդիւնք էր ներքին պատճառների՝ հետեւանք բուլղեւիկների յանցաւոր քաղաքականութեան: Նա չէր բխում քաղաքական հանդամանքների միջազգային նոր դասաւորութիւնից: Միջազգային կացութիւնն, ընդհակառակն, աւելի նպաստաւոր էր բուլղեւիկների համար. Ազրբէջանն անշարժ էր, Վրաստանի անկումն անխուսափելի, Ռուսաստանի ներսը լուրջ շարժումներ չկային, Եւրոպան զբաղւած էր սեփական հոգսերով, եւ տաճիկ - բուլղեւիկեան բարեկամութիւնն աւելի եւս ամբանալու վրա: Յեղափոխութեան քաղաքական պատճառ չկար, եւ շարժումը տեղի չէր ունենայ, եթէ բուլղեւիկներն իրենք պրովոկացիայի չենթարկէին ժողովրդին: Ազատ մնացած մտաւորականութիւնը շուտով ու կսկիծով էր դիտում այս ամենն եւ շարժման մէջ մտաւ ոչ թէ «էշխանութեան քաղցրութիւնները վայելելու», այլ ժողովրդական տարերքին զաղափարական բովանդակութիւն տալու եւ երկիրը ծայրայեղութիւնից հեռու պահելու նպատակով: Մենք այնքան կոյր չէինք, որ չտեսնէինք, թէ ինչպիսի միջազգային աննպաստ

պայմաններում տեղի ունեցաւ շարժումը, որի հեղինակը՝ գիւղացիութիւնը հաշւի չէր առել հետագայ լինելիքները, որոնք անխուսափելի կերպով պիտի տանէին դէպի պարտութիւն, մանաւանդ Վրաստանի անկումից յետոյ, երբ բոլշևիկ հրամանատարութեան ձեռքերն արձակեցին, եւ նա դէպի Հայաստան շարտեց մեծաքանակ ուսական զօրքեր :

Փետրուարեան յեղաշրջումը ճնշեց, բայց նա ունեցաւ, ի հարկէ, մի շարք դրական հետեւանքներ, որոնց մէջ առաջին տեղն է բռնում հայ մտաւորականութեան փրկութիւնը կացինահար լինելուց կամ Ռուսաստան արտուելուց : Անշուշտ, այդ շարժումը քիչ նշանակութիւն չունեցաւ եւ սեփիմի փոփոխութեան տեսակէտից . այսօրեայ «մեղմ» կուրսը Հայաստանում, որոշ չափով, պարտական է եւ փետրուարեան յեղաշրջման : Սակայն, ինչքան եւ նշանակալից լինի փետր. 18-ի արդիւնքը, որքան եւ անխուսափելի ու անհրաժեշտ համարենք այդ շարժումը, չի կարելի ժխտել, որ նա կտրուական ընդթ ունի եւ չի կողմում օրդանական մասը քաղաքական դէպքերի շարաշարութեան : Պարզ է, որ եթէ դեկտեմբերից իշխէր աւելի խելացի ու հեռաւես քաղաքականութիւն, փետրուարեան ապստամբութիւնը տեղի չէր ունենայ, եւ Հայաստանը ազատ կը մնար մի խոշոր ցնցումից : Պարզ է եւ այն, որ փետրուար 18-ից յետոյ Հայաստանում կատարուող դէպքերի պատասխանատուն ոչ թէ «նենդ դաշնակներն» են, այլ հէնց իրենք բոլշևիկները, որոնք ստեղծեցին Սողոմ - Գոմորը, հետեւաբար եւ փետրուարեան դէպքերը : Ես աւելորդ եմ համարում թելել ու վերլուծել այստեղ Հայաստանում եւ Լեոնահայաստանում կատարւած գործողութիւնները, որովհետեւ նրանք ըստ ամենայնի հասկանալի են եւ անխուսափելի փետրուարի դէպքերից յետոյ . մեր կռիւր Լեոնահայաստանում շարունակութիւնն էր Հայաստանում սկսւած կռիւի, եւ այն հանգամանքը, որ մենք ուսական մեծաքանակ ունեւերի ճնշման տակ տեղի աւինք, դեռ չի նշանակում, թէ մեր դասն անարդար էր, եւ մենք պարտւած ենք իսպառ : Ո՛չ, մենք պարտւած չենք, մեր գաղափարները հիմա եւս հայ ժողովրդի սրտում նոյնքան վառ են, որքան եւ առաջ : Մեզ կարելի էր կռիւ դաշտում յաղթել, որովհետեւ մեր բանակը փոքր էր, իսկ ուս զօրքը շա՛տ . մեզ կարելի է Փիղիբապէս վերացնել՝ յենելով սուս աւինները կամ վարձկան մարդասպանները վրա, բայց գրանով մեր գաղափարները չեն մեռնի . նրանք վաղ թէ ուշ կը յաղթանակեն :

Թեր գաղափարներն այն գաղափարներն են, որոնցով ապրել ու ողևորուել է հայ ժողովուրդը վերջին տասնամեակներում եւ որոնք

բուլչեւիկները կողմից էլ ընդունուում են տեսականապէս — բոլոր պղզերի ազատութիւնը, թէեւ հէնց որ բանը դործի է հասնում, նրանք ո՛չ միայն ազատութիւն չեն տալիս, այլ եւ դահլիճ են դառնում աղզերի գլխին: Ե՛ւ փետրւարին, ե՛ւ առաջ, ե՛ւ այսօր մեր քաղաքական նշանարանն է Հայաստանի ազատութիւնը — Միացեալ եւ Անկախ Հայաստան, եւ այն փաստը, որ Հայաստանում այսօր ուսւ գինւորի սերին է իշխում, բնաւ չի յուսահատեցնում մեզ: Մենք դրա վրա նայում ենք իբրեւ ժամանակաւոր դժբախտութիւն — դժբախտութիւնները յարատեւ չեն լինի. նրանք կանցնին, եւ Հայաստանն էլ, ի հարկէ, կը լինի ազատ: Այսպէս ենք մտածում մենք, որ մեր գաղափարի համար քչւած ենք օտար երկնքի տակ, ինչպէս քչւում էին ազատութեան ռահվիրաները ցարերի ու սուլթանների կողմից: Այսպէս է մտածում եւ բովանդակ հայ ժողովուրդը, որ դատապարտւած է սպրիտ բուլչեւիկները իշխանութեան ներքոյ, ինչպէս եւ նրանք, որոնք ցրւած են աշխարհի չորս ծայրերը:

Մեր հակառակորդները մեզ վարկարեկելու ղիտաւորութեամբ մեր պայքարն աշխատում են ներկայացնել որպէս նեղ եսական, շահագիտական մի դործ: Իբր թէ, մենք չենք ուզում հրաժարել իշխանութիւնից՝ «փափուկ աթոռներից», «հանգիստ կեանքից», «չաղ սոճիկից» ու «պետական կարկանդակից»: Պրովոկացիայի ամենագուհիկ ու էջտան տեսակն է սա, որովհետեւ անգամ երեսներին յայտնի է, թէ մենք ինչ «փափուկ» աթոռները՝ վրա էինք նստած Հայաստանում եւ ինչ համեղ «կարկանդակներ» էինք ուտում: Եւ եթէ հարցն անձնական փիճակին դայ, կարելի՞ է համեմատութեան դնել «ժողովրդական կոմիսարները» և մեր ապրելակերպի միջև. մենք ուրախ կը լինէինք նրանց յարմարութիւնների տասներորդ մասը դէթ ունենալու: Նրանք, ուրբեր ծանօթ են այն պայմաններին, որոնց մէջ մենք ամենքս ապրել ու դործել ենք Հայաստանում, չեն կարող մեզ մեղադրել անձնական միտումների մէջ, իսկ եթէ մեղադրում են, կը նշանակէ շատ անբարեխիղճ, շատ վատ մարդիկ են:

Մենք Հայաստանի ազատագրութեան մենաշնորհը չենք լուրացրել. մեզ համար կարեւորը ազատագրութեան փաստն է: Թէ ո՞վ կը տայ հայ ժողովրդին ազատութիւն — դաշնակցականները, բուլչեւիկները — այդ միեւնոյնն է. միայն թէ ազատութիւն տրւի: Եւ մենք պատրաստ ենք նեցուկ հանդիսանալու ամէն մէկին՝ ով կը դործէ այդ ուղղութեամբ: Թո՛ղ բուլչեւիկներն իրականացնեն մեր պահանջները, մենք ամենայն ուրախութեամբ յետ կը քաշենք: Բայց կարո՞ղ են նրանք իրականացնել, ընդունա՞կ են դրան, կը կամենա՞ն...

Մեր պահանջն է, որ Հայաստանը լինի իրապէս անկախ, որ երկու Հայաստանները միացեն, որ Հայաստանի իշխանութիւնը բխի Հայաստանի ժողովրդից եւ ոչ թէ նշանակւի Մոսկուայից, որ Հայաստանը կառավարի սեփական պաշտօնեաներով ու զինուորներով եւ ոչ թէ ուրեւ կոմիտարներով ու սեփններով, — մի խօսքով, որ հայ ժողովուրդը ինքը լինի իր երկրի եւ ճակատագրի տէրը եւ ոչ թէ Մոսկուան կամ Մոսկուայի անուշով եկող թալանչի եւ արբեցող կոմիտարներ կամ մեր իրականութեանն անհարազատ չինովնիկներ: Կարո՞ղ են այս տեսակէտի վրա կանգնել երեւանեան «ցենտրովիկները»: Եթէ կարող են — մեր գոյութիւնը աւելորդ է: Եթէ չեն կարող, — ինչպէս չեն կարողացել մինչեւ այժմ, — մենք կանք ու կը մնանք, եւ հայ ժողովրդի համակրանքը միշտ ու միշտ մեզ հետ կը լինի, որքան էլ ճնշումներ գործ դնեն կոմիտարները: Մեր գոյութիւնն ու գործունէութիւնը հետեւանք է ոչ թէ մեր կամքի, այլ՝ մեր իրականութեան, եւ քանի այդ իրականութիւնը չէ փոխւած համաձայն առարկայական պայմանների եւ ժողովրդի ցանկութեան, մեր գոյութիւնը անխուսափելի է: Կարող են փոխւել դերակատարները. մի անձի տեղը կը բռնէ միւսը, բայց դադափարը եւ այդ դադափարի իրազօրծողները կը շարունակեն ապրել եւ կը լինեն այնքան ուժեղ, որքան խոր արմատ կունենան Հայաստանի իրականութեան մէջ:

Այս տեսակէտից, բոլորովին վաղաժամ են մեր հակառակորդ բանակից լուող կանչուածները, թէ Դաշնակցութիւնը քայքայուած է, թէ նրա շարքերից շատերը հեռանում են, թէ նա կտրոււմ է հայ կեանքից եւ այլն: Վաղաժամ են այս ցնծութիւնները, որովհետեւ Դաշնակցութիւնը այսպիսի օրեր շատ է տեսել եւ միշտ էլ դուրս է եկել ճգնաժամից կազդուրւած եւ գօտեպինդ. նոյնը կը լինի եւ այս անգամ: Մի շարք վիթխարի ճակատամարտներից յետոյ՝ Դաշնակցութիւնը քաշւել է նոր դիրքեր: Նահանջի ժամանակ, ի հարկէ, կը լինեն թուլամորթ դասալիքներ, որոնք դողում են իրենց կաշին փրկելու համար. կը լինեն հողերանութեամբ պարտւածներ, վհատուողներ, շարքերից դուրս ընկածներ, դաւաճաններ, թշնամիւ կողմը անցնողներ եւ այլն: Սա սովորական երեւոյթ է պատերազմների ժամանակ, եւ դարմանալ պէտք է միայն, որ դասալիքների եւ դաւաճանների թիւը շատ քիչ է մեր շարքերում...

Այս՝ Դաշնակցութեան համար պայմանները դասաւորւեցին բաւական աննպաստ: Աննպաստ ո՛չ թէ գաղափարական տեսակէտից — մեր գաղափարները մնում են թարմ եւ անխոցելի — այլ արտաքին հանդամանքների շնորհիւ: Ամենից առաջ, ծանր նահանջը եւ Զան-

գեղուրում կրած մեր դժւարութիւնները անդրադարձել են մեր հոգեվիճակի վրա : Ամենքս գաղաղած ենք եւ իրարից դժգոհ : Միւս կողմից, նիւթական վատ սլալմաններն անտանելի են դարձնում մեր կեանքը տարագրութեան մէջ : Եւ, վերջապէս, մենք շատ հեռու ենք արտասահմանեան մարմիններից, որոնք իրենց գործունէութեամբ երբեմն հակասում են երկրի հրամայական սրահանջներից բխող քաղաքական գծին եւ տարւում են դադուլթային անհող ու ցնորական գաղափարներով, եւ մենք անզոր ենք լինում նրանց ուղիղ գեանի վրա կանգնեցնելու եւ միատարր քաղաքականութիւն սարտադրելու : Քիչ չեն նաեւ բարոյական ազանգութիւնները, որոնք տարիներ ընթացքում հաւաքել են մեր շարքերում եւ վարակում են մեր կուսակցութեան մարմինը : Բացի այդ, առաջ են եկել մի շարք քաղաքականութեան հարցեր, որոնք սահանջում են շուտափոյթ եւ լուրջ լուծում :

Այս խնդիրները միանգամայն գլխակցւում են մեր ընկերների մեծ մասի կողմից եւ համապատասխան վերաբերումի են արժանանում, իսկ քչերն են միայն թեթեւ վերաբերում ցոյց տալիս ու գրաղւած են «քննադատութեամբ», ու «ներքին հաշիւներ մաքրելով» : Հետզհետէ, սակայն, այս վերջիներն էլ կը սկսեն ըմբռնել, թէ տրոտնշով ու «քննադատութեամբ» բան դուրս չի գայ, եւ ժամանակն է խելքի գալու եւ գործի սկսելու : Եւ գործն արդէն սկսած է . արտասահմանեան բոլոր շրջաններում մեր կուսակցութեան ներսը կատարւում է եռուն կազմակերպական աշխատանք, որը պէտք է զարգացնել երկու ուղղութեամբ . մի կողմից պէտք է անողոր կոխ մըղել սատեհապաշտութեան ու քաղաքական հայեացքների անորոշութեան դէմ՝ հաստատելով կուսակցական մէկ եւ ընդհանուր քաղաքականութիւն, միւս կողմից անխնայ լինել դէպի արատաւորւած, բարոյաղուրդ, զեղծարար, ոչ - յեղափոխական ու հակասոցիալիստական տարրերը, որոնք տեղ են գտեր մեր կուսակցութեան շարքերում : Ճիշտ է, այդպիսի տարրերի հոտառութիւնը բաւական սուր է, եւ նրանցից շատերն արդէն մեզանից հեռացել են այնտեղ, ուր կայ իշխանութիւն, բայց քիչ չեն աւելի հեռատեսները, որոնք հասկանում են, որ վաղն իշխանութիւնը նորից մեզ է անցնելու եւ մնում են այդ օրւայ յուսով : Մաքրագործումը մեր շարքերի պէտք է տարւի հետեւողական կերպով եւ առանց վարանումի :

Սակայն, մենք բաւական չեղեցինք բուն խնդրից : Ես բնաւ նստակ չունէի կուսակցական հարցեր յարուցանելու . դրա մասին զեռառիթ կը լինի աւելի հանգամանօրէն խօսելու : Այստեղ իմ նպատակն էր պարզել, թէ ի՞նչ է լինելու մեր հետադայ քաղաքականութիւնը Հայաստանում :

Յօդուածս ուշադրութեամբ կարդացողի համար, այս հարցի պատասխանը արդէն պէտք է պարզ լինի. փետրուարեան շարժման պատճառը բոլշևիկեան վարչապետութիւններն էին: Այդ վարչապետութիւնների վերացումով վերացեցին եւ շարժման անմիջական պատճառները, ուրեմն, վերացեց եւ կուսի շարունակութեան անհրաժեշտութիւնը: Մենք շատ լաւ տեսնում ենք, թէ ներկայումս մեր ժողովրդին ամենից աւելի ինչ է հարկաւոր. նրան հարկաւոր է հանդիստ եւ արնտեսական բարելաւում: Եթէ այժմւայ բոլշևիկները կարողանան գէթ նւագագոյն չափով դոհացնել ժողովրդին, մենք ո՛չ միայն խոչընդոտ չենք լինի, այլեւ ամենաանկեղծ կերպով կը թելադրենք մեր երկրի ընկերներին օգնել նրանց եւ արտասահմանում էլ արդէւրեւ չենք յարուցանի: Այդպէս էինք մտածում մենք ղեկավարներին, երբ բոլշևիկները անամօթօքէն խարեցին եւ հասցրին փետրուարին: Այդպէս ենք մտածում եւ այսօր, եւ այս անգամ էլ, ինչպէս առաջ, միայն իրենցից՝ բոլշևիկներից է կախում՝ կրկնել հին խաղը, թէ նոր դրութիւն ստեղծել: Մենք կուսից վախեցող չենք եւ բոլշևիկներին մեզ ուղղած ամէն հարեւորին կը պատասխանենք մի քանի հարեւորով. մեր մէջ դրա համար կայ եւ բարոյական ուժ եւ վճռականութիւն, եւ հայ աշխատաւորութեան ճնշիչ մեծամասնութիւնը դարձեալ մեզ հետ է. որքան եւ կեղծիքներ կատարեն բոլշևիկների կողմից, սակայն մեր խորին համոզումով Հայաստանը պէտք է ազատ պահել ներքին ջնջումներից ու քաղաքացիական կռիւներից: Եթէ բոլշևիկները գոնէ ա՛յս անգամ համամիտ են մեզ, ապա կարելի կը լինի ժողովրդին որոշ ժամանակ ապահովել խաղաղութիւն եւ աշխատանքի հնարաւորութիւն:

Այս ամենից, սակայն, բնաւ չի հետեւում, որ մենք զազաւարական նահանջ ենք կատարում բոլշևիկի առաջ. ո՛չ, մենք միայն նահանջում ենք ռուս սոցիալիստի առաջ: Մենք հաստատ դիտենք, որ բոլշևիկը Հայաստանում իշխող կը լինի այնքան, որքան ռուս զօրք կայ այնտեղ. հէնց որ ռուս զօրքը կողկասից հեռանայ, հայ բոլշևիկներն իրենք էլ կը վախչեն: Այդ պատճառով, մենք կարծում ենք, որ Հայաստանի բոլշևիկներից ազատագրելը ներքին հայկական խընդիր չէ, այլ համակողկասեան կամ ընդհանուր ռուսական մի խնդիր: Մենք հաւատացած ենք, որ հեռու չէ բոլշևիկի մահը. իր սոցիալական փորձերի մէջ նա վաղուց սնանկ է յայտարարել. հասել է արդէն եւ քաղաքական սնանկութեան ժամը, եւ կոյր պէտք է լինել չը հասկանալու համար Ռուսաստանում նկատուող երեւոյթների խմատը: Այո՛, շատ հեռու չէ այն ժամանակը, որ մեզ լացով ու սգով ճանապարհ գցող, հայ քաղաքացիներն ու զիւղացիները խնդութեամբ ու

ծափահարութեամբ կը զիմաւորեն մեզ Հայաստանում : Եւ զրա համար ո՛չ յեղափոխութեան կարիք կայ, ո՛չ տեղուներէ եւ ոչ էլ ուրիշ սարսափելի բաների . անգամ պրոպագանդի էլ պէտք չկայ : Հայաստանը բոլորովին հասունացած է այդ վիճակի համար, եւ նա այդպէս կը սպասէ մինչեւ որ ուստական լուծը վերացուի իր պարանոցից :

Այս այսպէս լինելով՝ երկրում գտնուող մեր ընկերները պէտք է շատ զգոյշ լինեն եւ չենթարկուեն որ եւ է պրոփոկացիայի : Պէտք է լծուել պետական եւ հասարակական աշխատանքին, նպաստել ժողովրդի անտեսական վիճակի բարելաման, պետական մեքենայի կարգաւորման, երբեք չմտածել սարսուտի մասին . պէտք է նպաստել, որ ստեղծւած դրութիւնից Հայաստանը առաւելագոյն օգուտները քաղէ : Որովհետեւ, կրկնում եմ, ինչ որ այսօր, բոլշևիկների օրով, չինւի Հայաստանում, վաղը պիտանի պէտք է լինի մեզ համար : Օգնելով այսօր Հայաստանի վերաշինութեան՝ մենք նպաստած կը լինենք մեր վաղւայ գործին :

1921 թ. Թաւրիզ

